տա նոսա, խստիւ պատուիրեալ՝ ճշդիւ քննել զպատճառ հրաժարման նորին, գիտել և իմանալ զյաջորդն, թէ ո՞ր-պիսի ոք իցէ, և թէ ունի՞ զձիրս առաջնոյն 'ի կառավարել զժողովուրդն։ Կոչեցին Նախարարք զՊօղոս 'ի Դուռն ('ի 24 Հոկտեմբերի), և նա եկ 'ի ճանապարհ հետի. և իմացեալ նոցա հասուցին նմա 'ի ճանապարհի երիվար զարդարեալ, և նստուցեալ զնա տարան 'ի Դուռն, և 'ի հարցանել Նախարարաց զպատճառս հրաժարման իւրոյ, նա յառաջ երեր միայն զտկարութիւն անձին իւրոյ. նոքա բազմադիմի բանիւք թախանձէին և յորդորէին զնա չթողուլ զիշխանութիւնն զայն, յայտնապէս գոհանալով զխոհեմութենէ և զբարուք կառավարութենէ, և զծանօթութենէ բարուց Արքայի, իսկ նա համեղ և արգահատական բանիւք յօժարեցոյց զսիրտս նոցա։ Ապա հարցին զյաջորդէ նորին, և նա արար պատասխանի թէ՝ է մին 'ի ձեռնասուն աշակերտաց իմոց. եւ դարձաւ անտի շքով 'ի Պատրիարքարանն, և կազմեաց ատեան մեծ 'ի Մայր Եկեղեցին, և համակամ խորհրդով ընտրեցին յԱթոռ Պատրիարքութեան զԿարապետ Եպիսկոպոս Ամասիոյ, միաբան Երուսաղէմի և Նուիրակ Աժտէրխանու. և Պօղոս յետ ասելոյ զՊահպանիչն՝ կալեալ զձեռանէ նորին կացոյց յԱթոռն, ետ զգաւազանն 'ի ձեռս, ադոյց զմատանին 'ի մատն՝ և արկ զփիլոնն 'ի թիկունս նորին՝ և շնորհաւորեալ մեկնեցաւ։

Եւ 'ի վաղիւ անդ ('ի 27 Հոկտեմբերի) գնաց Կարապետ 'ի Դուռն և զգեցաւ վերարկու պատուոյ ըստ սովորութեան, և մեծահանդէս փառօք դարձաւ յեկեղեցին։ Իսկ Պօղոս Եպիսկոպոս կամօք Արքային և Ամիրայից գնացեալ նստաւ 'ի վանս Իւսկիւտարու։

Սեւերէկցի Պետրոս անուն ոմն Աբեղայ՝ խաբէյութեամբ ձեւացեալ Եպիսկոպոս ձեռնադրեալ էր զՅ Քահանայս յԵրզնկայ քաղաքի՝ խարտաֆիլակութեամբ յիմարեալ եւ թմբրեալ Առաջնորդի տեղւոյն, զոր լուեալ Կարապետ Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս եւ ստուգեալ 'ի հանդիպի քննութեան 'ի բերանոյ նորին խաբեբայի՝ ելոյծ 'ի կարգէն՝ և ընդ բանիւ արարեալ սահմանեաց ապաշխարանս և արձել զնա 'ի վանս ինչ։ Եւ յետ այնորիկ խորհրդով բարձրաստիճան եկեղեցականաց՝ գրեաց առ ամենայն